

Ք.Երևան, 31 հունվարի, 2023 թվական

Erévan, le 31 Janvier, 2023

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվազյանի, Ռոնի մասնագիտական կրթության ընկերությունն ասոցիացիան (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս նախագահ Քրիստիան Դրոզի և «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ ի դեմս տնօրեն Գոհար Գրիգորյանի, (այսուհետ առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր), կնքեցին համագործակցության հուշագիր.

Le ministère de l'Education, des Sciences, de la Culture et du Sport (ci-après Ministère) de la République d'Arménie représenté par la vice-ministre de l'Education, des Sciences, de la Culture et du Sport Araksya SVADJYAN, la Société d'Enseignement Professionnel du Rhône (ci-après Association), représenté par son Président Christian DROZ et la Fondation «Centre d'Enseignement Professionnel Franco-Arménien» (ci-après Fondation) représentée par sa directrice Gohar GRIGORYAN, (ci-après la Partie, ensemble les Parties), ont signé un mémorandum de coopération :

ՆԱԽԱԲԱՆ

INTRODUCTION

Հիմնադրամի նպատակն է Երևանի Տիգրան Մեծի 38 հասցեում ստեղծել Արհեստների կամպուս (այսուհետ՝ Կամպուս), որն իրենից կներկայացնի նաև փորձարարական մի տարածք՝ իրականացնելու նոր կրթական ծրագրեր՝ զարգացնելով հատկապես աշխատանքի վրա հիմնված կրթությունը (այսուհետ՝ Դուալ կրթություն), մեծահասակների կրթությունը՝ դառնալով մասնագիտական կրթության ռեսուրս կենտրոն:

L'ambition de la Fondation est de créer, sur son site d'Erevan, 38 avenue Tigran Mets, un Campus des métiers (ci-après Campus), qui serait un terrain d'expérimentation pour mettre en place de nouveaux cursus, notamment en développant la formation basée sur le travail (ci-après Formation duale), des dispositifs de la formation pour les adultes, et le faire évoluer vers un centre de ressources de formation professionnelle.

Կամպուսն իր գործունեությունը կտարածի Հայաստանի տարածքում՝ շնորհիվ մարզերում գործող պետական և մասնավոր մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցային քաղաքականության՝ այսպիսով դուրս գալով դեպի միջազգային հարթակ իր պատմական ֆրանսիական գործընկեր Ասոցիացիայի աջակցությամբ, որն իր միջազգային և, հատկապես,

Le campus rayonnera sur le territoire arménien, grâce à une politique de partenariat avec des établissements de formation professionnelle publics et privés dans les régions, tout en privilégiant l'ouverture à l'international avec le soutien de son partenaire historique français, l'Association qui ouvrira son réseau à l'international et notamment

Եվրամիության գործընկերների ցանցը կբացի Հիմնադրամի առջև: Կամպուսն իր մեջ կներառի նաև ինկուբատոր:

Հիմնադրամի գործունեությունը, ի նպաստ Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման, իրականացվում է գերազանցապես սոցիալական էթիկայի շրջանակներում: Այն ուղղված է հատկապես սոցիալապես խոցելի խավի ազգաբնակչության համար մասնագիտական կրթություն իրականացնելուն, որը շատ կարևոր է երկրի համար, որպեսզի վերջինիս հնարավորություն ընձեռվի ապրել և արարել Հայաստանում:

Հիմնադրամի զարգացման ծրագրով նախատեսվում է նաև աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը, կանանց դերի բարձրացմանը տնտեսության մեջ, ինչպես նաև ներառել սոցիալական կյանքի բաղադրիչ համայնքի համար:

Զարգացման ծրագիրը հաջողությամբ իրականացնելու նպատակով Հայաստանում կարողությունների նոր պահանջներին համահունչ Հիմնադրամն իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության աջակցությամբ իր գործունեության բոլոր ոլորտներում և, հատկապես, ֆրանկոֆոնիայի տարածման գործում:

Հիմնադրամը գործընկերային կայուն և մշտական աջակցություն է ստանում իր պատմական գործընկեր Ասոցիացիայի կողմից, որը նախագահում է Հիմնադրամը:

Նախարարությունը, Երևանի և Լիոնի քաղաքապետարանները, որոնք հանդիսանում են Հիմնադրամի կառավարիչներ և հիմնադիր անդամներ, ինչպես նաև Լիոնի Մետրոպոլը, մշտապես աջակցել են Հիմնադրամին՝ զարգացման ծրագրերն իրականացնելու նպատակով: Վերջիններս միաձայն

dans l'Union européenne. Le campus sera également sera doté d'un incubateur.

L'action de la Fondation au service du développement de l'économie de la République d'Arménie se déploie dans le cadre d'une éthique sociale. En effet, il s'adresse particulièrement à une population vulnérable qu'il forme à des métiers de techniciens, utiles au pays, pour leur permettre de vivre et travailler en Arménie.

Le projet de développement de la Fondation entend favoriser l'accès des bénéficiaires en situation de handicap, développer le rôle des femmes dans l'économie et intégrer une dimension de vie sociale ouverte sur le quartier.

Pour mener à bien ce projet de développement, en phase avec les nouveaux besoins de compétences en Arménie, la Fondation conduit son action avec le soutien de l'Ambassade de France en Arménie pour l'ensemble de son action et notamment la diffusion de la francophonie.

La Fondation bénéficie de la collaboration et de l'appui constants de son partenaire historique l'Association, qui en assure la présidence.

Le Ministère, la Ville d'Erevan, la Ville de Lyon, eux aussi fondateurs et administrateurs de la Fondation, ainsi que la Métropole de Lyon, ont toujours été aux côtés de la Fondation pour soutenir ses projets de développement. Ils accordent unanimement un fort soutien à la mise en place du projet du Campus des

իրենց աջակցությունն են հայտնել Արհեստների Կամպուսի ստեղծման ծրագրին, որն արդեն հաստատվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հիմնադրամի ծրագիրը մեծ կարևորություն ունի նաև երկու քաղաքների միջև համագործակցության համար՝ 2022 թվականի հունիսի 28-ին կնքվել է հուշագիր Լիոն և Երևան քաղաքների միջև Հիմնադրամի գործունեությանը սատարելու նպատակով:

Հիմք ընդունելով՝ 2022 թվականի մարտի 9-ին Փարիզում կայացած «Հավակնություններ Ֆրանսիա-Հայաստան» խորագրով համաժողովի արդյունքում Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունների միջև ստորագրված 2021-2026 թվականների համար նախանշված ճանապարհային քարտեզով սահմանված ֆրանս-հայկական տնտեսական և առևտրային հարաբերությունների սատարելու և դրանց նոր թափ տալու համատեղ նպատակներն ու պարտավորությունները, ինչպես նաև 2022 թվականի մայիսի 4-ին Լիոնի քաղաքապետարանում տեղի ունեցած Հոգաբարձուների խորհրդի տարեկան նիստի ընթացքում ընդունված Հիմնադրամի նոր ռազմավարական ծրագիրը՝ Կողմերը՝ ի նպաստ հայ երիտասարդներին որակյալ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության տրամադրման և մասնագիտական կրթության ոլորտում նոր փուլ թևակոխելու նպատակով՝ ստորագրեցին սույն Համագործակցություն հուշագիրը, (այսուհետ՝ Հուշագիր), ամրագրելով հետևյալը:

I. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կողմերի

métiers validés lors de la dernière Assemblée Générale de la Fondation.

Prenant en considération le fait que le projet de la Fondation occupe aussi une place importante dans la coopération des deux villes, un mémorandum a été signé entre la ville de Lyon et la ville d'Erévan le 28 juin 2022 dans le but de soutenir la Fondation dans son action.

Compte tenu de

La rencontre « Ambitions France-Arménie » entre les gouvernements arménien et français, tenue le 9 mars 2022 à Paris, donnant lieu à l'établissement et à la signature d'une feuille de route économique 2021-2026, qui fixe des objectifs et des engagements réciproques en vue de soutenir et d'intensifier les relations économiques et commerciales franco-arméniennes, en favorisant les approches concrètes et pragmatiques, et en s'appuyant sur les coopérations existantes et pérennes ; ainsi que les nouvelles orientations stratégiques adoptées lors de l'Assemblée Générale de la Fondation, tenue à l'hôtel de ville de Lyon le 4 mai 2022, les Parties ont signé le mémorandum suivant (ci-après Mémorandum) au service de la formation professionnelle qualifiée de la jeunesse arménienne, dans des métiers de techniciens et d'artisans, pour franchir aujourd'hui un nouveau cap en prenant les dispositions suivantes:

I- OBJET DU MÉMORANDUM

1. Les Parties établissent cette coopération dans le respect de la réglementation de la République

կանոնադրական փաստաթղթերով սահմանված իրավասությունների և Հուշագրով նախատեսված պարտականությունների շրջանակներում՝ հաստատելով միմյանց հետ փոխհամագործակցային գործընկերություն՝ նպաստելու մասնագիտական կրթության և ուսուցման զարգացմանը:

2. Հուշագիրը և դրանից բխող գործողություններն արձանագրվում են շահերի ընդհանրության շրջանակներում, Կողմերի համագործակցությունը կատարվում է կամավոր հիմունքներով՝ ղեկավարվելով գործողությունների համաձայնեցվածության և կառուցողական համագործակցության սկզբունքներով:

3. Հուշագրի շրջանակում Կողմերի նպատակն է զարգացնել համագործակցությունը, համախմբել և համակարգել ջանքերը հետևյալ հարցերի շուրջ.

ա) աջակցել Հիմնադրամին իր ռազմավարական ծրագրի իրականացման գործում,

բ) վերակազմակերպել Հիմնադրամն Արհեստների կամպուսի (ռեսուրս կենտրոնի), որն իր նպաստը կրերի և կզարգացնի կրթական դիվերսիֆիկացիան, սահմանափակ կարողություններով շահառուների մուտքի հնարավորությունը, ֆրանկոֆոնիայի արժևորումը, գործունեության ընդլայնումը Հայաստանի Հանրապետության տարածքում, սոցիալական էթիկան, կայուն զարգացումը, ինչպես նաև զարգացումը Էրազմուս+ փոխանակման ծրագրի շրջանակներում,

գ) աջակցել Հիմնադրամին իր ոլորտում գերազանցության կենտրոն դառնալու նպատակով, որը կտարածի իր կարողությունները Հայաստանի Հանրապետության մարզերում, մոտ լինելով տեղի ազգաբնակչությանը,

դ) աջակցել Հիմնադրամի միջազգայնացմանը:

d'Arménie, dans le respect de leurs cadres d'intervention respectifs. Le présent Mémorandum établit un partenariat réciproque en faveur du développement de la formation professionnelle.

2. Le présent mémorandum et toutes les actions qui en découleront, sont inscrits dans la recherche de l'intérêt général, la coopération des Parties se faisant sur la base du volontariat et dans la recherche de la concertation et d'un principe de coopération constructive.

3. Dans le cadre du Mémorandum l'objectif des Parties est de développer les coopérations et de réunir et coordonner leurs forces autour des axes suivants :

a. Soutenir la Fondation pour la réalisation de ses orientations stratégiques,

b. Transformer la Fondation en un Campus des métiers (centre de ressources), qui développera et favorisera la diversification pédagogique, l'accès des bénéficiaires en situation de handicap, la valorisation de la francophonie, l'action sur le territoire de la République d'Arménie, l'éthique sociale, le développement durable, ainsi que le développement dans le cadre du programme d'échange Erasmus+,

c. Soutenir la Fondation afin qu'elle devienne un établissement de référence dans son domaine, diffusant ses compétences auprès des régions de la République d'Arménie au plus près des populations,

d. Contribuer à l'internationalisation de la Fondation.

II. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախարարությունը պարտավորվում է.

ա) Մասնակցել Հիմնադրամի հետ հանդիպումներին, հնարավորինս աջակցել Հիմնադրամի ընթացիկ գործունեությանը,

բ) Հիմնադրամին տրամադրել Նախարարությունում առկա և հասանելի վիճակագրական տվյալներ և օգտակար այլ ուսումնասիրություններ Հուշագրով համատեղ սահմանված նպատակների իրականացման համար,

գ) աջակցել Հիմնադրամի նախաձեռնությունների և ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթմանը այլ օրենքով չարգելված աղբյուրներից,

դ) նպաստել Հիմնադրամին տարբեր ծրագրերի շրջանակներում, *հատկապես՝ մարզային և միջազգային համապատասխան դերակատարների միջև կապ հաստատելու նպատակով,*

ե) տրամադրել փորձագիտական եզրակացություններ և դրանց հիման վրա համապատասխան երաշխավորություններ Հիմնադրամի կողմից առաջարկված ֆորմալ և ոչ ֆորմալ փորձարարական ծրագրերին:

2. Հիմնադրամը և Ասոցիացիան համատեղ պարտավորվում են.

ա) Նպաստել Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության և ուսուցման բարելավմանը՝ վերջինս մոտեցնելով եվրոպական չափանիշներին,

բ) զարգացնել նորարարական և փորձնական ծրագրեր Երևանի Կամպուսում Նախարարության համաձայնությամբ, որոնք հետագայում կարող են կիրառվել նաև Հայաստանի Հանրապետության

II- OBLIGATIONS DES PARTIES

1) Le ministère s'engage à:

a. Participer à des rencontres avec la Fondation afin de soutenir son action,

b. Communiquer à la Fondation les données statistiques et études existant au Ministère utiles au développement des objectifs communs fixés par le présent mémorandum,

c. Soutenir les démarches de la Fondation pour la réalisation de ses projets et pour la mobilisation des ressources financières nécessaires, dans le respect des règles légales,

d. Soutenir les actions de la Fondation dans le cadre de ses projets, par des mises en relations pertinentes avec les acteurs régionaux et internationaux,

e. Accompagner les expérimentations formelles et non formelles proposées par la Fondation, délivrant des avis techniques et des recommandations.

2) La Fondation et l'Association s'engagent conjointement à :

a. Contribuer à l'amélioration du système de formation professionnelle de la République d'Arménie par le rapprochement avec le système européen,

b. Développer des formations expérimentales, innovantes sur le campus d'Erevan, en coordination avec le Ministère, qui pourraient être appliquées dans d'autres établissements de formation

մասնագիտական այլ ուսումնական հաստատություններում,

գ) կիրառել մարդկային, նյութական և տեխնիկական ռեսուրսները՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ժամանակակից և դինամիկ մասնագիտական կրթություն իրականացելու նպատակով,

դ) ներդնել ժամանակակից և նորարարական տեխնոլոգիաներ և մեթոդներ ուսուցման և դասավանդման, կառավարման գործընթացներում միջազգային տեղեկացներին համապատասխան, մասնավորապես՝ թվային ոլորտում,

ե) նպաստել ֆրանկոֆոնիան մասնագիտական ուսուցման ոլորտում,

զ) ուսումնասիրել Եվրոպայի մասնագիտական ուսուցման ոլորտում գործող ռեսուրս կենտրոններին լավագույն փորձը և տեղայնացնել այն Հիմնադրամում,

է) աջակցել Հիմնադրամի շենքային պայմաններին, ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի բարելավման աշխատանքներին,

ը) նպաստել Հիմնադրամի դասավանդող անձնակազմի մասնագիտական շարունակական զարգացմանը եվրոպական մասնագիտական կրթական և այլ ոլորտային հաստատություններից մասնագետների ներգրավման միջոցով,

թ) նպաստել Հիմնադրամի սովորողների մասնագիտական կողմնորոշմանը և կարիերայի զարգացմանը,

ժ) համագործակցել ֆրանսիական և օտարերկրյա այլ գործընկեր կազմակերպությունների հետ՝ ի նպաստ Հիմնադրամի միջազգայնացմանը և վարկանիշի բարձրացմանը,

ի) համախմբել քաղաքացիական հասարակությանը, հատկապես սփյուռքահայ և հայասեր դերակատարներին՝ համագործակցելով նրանց հետ Հիմնադրամում նախաձեռնվող կրթական, մշակութային և այլ ծրագրերի շրջանակում:

professionnelle de la République d'Arménie,

c. Utiliser le potentiel humain, matériel et technique pour réaliser une formation professionnelle moderne et dynamique conformément aux exigences du marché du travail,

d. Mettre en place des méthodes pédagogiques et managériales modernes en s'inspirant des évolutions internationales et en prenant en compte le développement des nouvelles technologies, notamment sur le plan numérique,

e. Promouvoir la francophonie dans l'enseignement professionnel,

f. Etudier l'expérience des centres de ressources européens dans le domaine de la formation professionnelle et l'adapter au sein de la Fondation,

g. Soutenir les travaux d'amélioration des locaux et des infrastructures et de la base technique du lycée,

h. Soutenir la réalisation des programmes de formation et de perfectionnement professionnel des enseignants de la Fondation, y compris avec des spécialistes d'établissements européens,

i. Contribuer à l'orientation professionnelle des étudiants de la Fondation et à leur insertion professionnelle,

j. Coopérer avec les partenaires français et internationaux en faveur de l'internationalisation et du renforcement de la notoriété de la Fondation,

k. Mobiliser la société civile, notamment la diaspora et les acteurs arménophiles en collaborant avec eux dans le cadre des projets éducatifs, culturels et autres, déployés par la Fondation.

III. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Հուշագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից՝ 5 տարի ժամկետով, որը ենթակա է հետագայում վերանայման:

2. Կողմերը ցանկացած պահի կարող են միակողմանիորեն դադարեցնել Հուշագիրը՝ գրավոր տարբերակով ծանուցելով մյուս Կողմին այդ մտադրության մասին 3 (երեք) ամիս առաջ: Հուշագրի դադարեցումը չի ազդում արդեն իսկ ձեռնարկված գործողությունների իրականացման վրա:

3. Հուշագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել հավելվածի միջոցով՝ Կողմերի գրավոր համաձայնությամբ:

IV. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի, հավասար իրավունքների և գործընկերության սկզբունքների վրա:

2. Հուշագիրը չի ազդում Կողմերի մասնակցությամբ այլ պայմանագրերից բխող՝ Կողմերից յուրաքանչյուրի իրավունքների և պարտականությունների վրա և Կողմերի միջև չի առաջացնում որևէ գույքային և/կամ ֆինանսական պարտավորություն:

3. Հուշագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր, չի առաջացնում միջազգային իրավունքով կանոնակարգվող իրավունքներ և պարտականություններ:

4. Հուշագրի մեկնաբանման կամ իրականացման հետ կապված ցանկացած վեճ, որը կարող է առաջանալ Կողմերի միջև, կարգավորվում է բարեկամաբար՝ Կողմերի միջև խորհրդակցությունների և փոխադարձ համագործակցության միջոցով:

5. Հուշագիրը կազմված է 3 (երեք) բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և ֆրանսերեն: Կողմերից

III- LA DURÉE DU MÉMORANDUM

1) Le mémorandum entre en vigueur dès sa signature pour une durée de cinq ans, reconductibles.

2) Les parties peuvent résilier le Mémorandum unilatéralement, par écrit, en respectant un délai de prévenance de 3 (trois) mois. La résiliation du Mémorandum n'emportera aucune conséquence négative sur les actions déjà entreprises.

3) Les Parties peuvent modifier ou compléter le mémorandum par écrit sous la forme d'un avenant.

IV- DISPOSITIONS DIVERSES

1) Les Parties coopèrent conformément aux lois arméniennes fondées sur les principes du respect mutuel, de l'égalité des droits et dans un esprit partenarial,

2) Le présent mémorandum n'affecte pas les droits et devoirs de chaque Partie qui découleraient d'autres contrats préalablement signés par les Parties, et ne crée aucune obligation financière et/ou immobilière entre les Parties,

3) Le présent Mémorandum n'a pas valeur de contrat international et n'emporte donc création d'aucun droit ni obligation pour les Parties, au sens du droit international.

4) Tout litige survenant entre les Parties concernant l'application ou l'interprétation du présent Mémorandum sera réglé à l'amiable. Les Parties s'engagent à procéder à toutes concertations à cette fin.

5) Le mémorandum est établi en Arménien et en Français, en 3 (trois) exemplaires originaux

յուրաքանչյուրին տրվում է մեկական բնօրինակ, որոնք հավասարազոր են: Հայերեն և ֆրանսերեն լեզուներով տեքստերի միջև որևէ անհամապատասխանության դեպքում հայերեն լեզվով տեքստը գերակայող է:

6. Հուշագիրը ստորագրվել է Երևան քաղաքում 2023 թվականի հունվարի 31-ին:

V. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ


ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱԶՅԱՆ

ՌՈՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ


ՔՐԻՍՏԻԱՆ ԴՐՈԶ

«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏՆՕՐԵՆ


ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ayant tous trois force juridique, un exemplaire pour chacune des Parties. En cas de non-conformité entre les textes arménien et français, la priorité sera donnée à la langue arménienne.

6) Le Mémorandum a été signé le 31 janvier 2023 dans la ville d'Érevan.

V- SIGNATURE DES PARTIES

MINISTRE DE L'ÉDUCATION DES SCIENCES, DE
LA CULTURE ET DU SPORT DE LA RA


ARAKSYA SVADJYAN

PRESIDENT DE L'ASSOCIATION SOCIÉTÉ
D'ENSEIGNEMENT PROFESSIONNEL DU RHONE


CHRISTIAN DROZ

DIRECTRICE DE LA FONDATION CENTRE
D'ENSEIGNEMENT PROFESSIONNEL FRANCO-
ARMENIEN


GOHAR GRIGORYAN